ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀՈՒԶՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ

Մեր պատմագրությանը հայտնի գյուղացիական առաջին ելույթն Արևելյան Հայաստանում Սարդարապատի մահալի բնակիչների 1832 թ. ընդվզումն էր՝ ուղղված ցարական պաշտոնյաների բռնությունների ու հարստահարությունների դեմ։ Բայց վերջերս հայտնի դարձավ, որ դրանից առաջ եղել է նաև մի այլ հուզում, որը բռնկվել է 1829 թ. Լոռիի գավառամասում։

Դեռ 1824 թ., երբ Արևելյան Հայաստանի այդ մասն արդեն միացված էր Ռուսաստանին, Կովկասի կառավարչապետ գեներալ Ա. Երմոլովը հայտարարեց, որ Ռուսաստանին մատուցած հատուկ ծառայությունների համար Բայդար օղլի Մահմուդ Կուլիին իրավունք է տրվում հավաքելու Լոռու գավառամասի Ղանլուչակ գյուղի մահմեդական բնակիչներից բերքի 1/10-ը, պարտադրելու նրանց, որ յուրաքանչյուր ընտանիք տարվա մեջ մեկ օր աշխատի իր տնտեսությունում, վարելով ու ցանելով նրա արտերը, հավաքելով ու տեղափոխելով բերքը։ Նորաթուխ աղան կարող էր նաև պահանջել, որ գյուղացիները տրամադրեն ծառաներ իր տնային, իսկ եթե պետք է նաև դաշտային աշխատանքների կատարման համար և այլն[1]։

1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ Ղանլուչակ գյուղի մահմեդական բնակիչները ցրվեցին և նրանց փոխարեն Կարսի մարզից եկան հաստատվեցին 40 ընտանիք հայեր, Մահմուդ Կուլի աղան սկսեց իր օգտին սահմանված վերոհիշյալ հարկերն ու պարհակները պահանջել սրանցից։ Սակայն հայերը հրաժարվեցին։ Այն ժամանակ աղան նրանց հանդեպ գործադրեց զանազան բռնություններ, ընդհուպ մինչև քահանային ու նրա եղբորը ծեծելը, հասցնելով մարմնական վնասվածքներ, արգելեց գյուղացիներին վարել ու ցանել և այլն։ Ղանլուչակցիները դիմեցին ցարական բարձրաստիճան պաշտոնյաների օգնությանը։ 1830 թ. դեկտեմբերի 2-ին Վրաստանի գլխավոր հրամանատար, ֆելդմարշալ Ի. Ֆ. Պասկևիչ-Երևանսկուն հղած իրենց գրության մեջ նրանք նշում էին, որ Կարսի փաշայությունից տեղափոխվելով Լոռի, կարծում էին, թե աղատվում են թուրքական բռնություններից ու կեղեքումներից, բայց, ցավոք, այդպես չեղավ, քանի որ հիշյալ Մահմուդ Կուլի աղան այստեղ իրենց հանդեպ գործադրում է Թուրքիայում կիրառվող վայրագությունները, պահանջելով զանազան հարկեր ու պարհակներ։ Այդ բոլորի հետևանքով, շարունակում էին գյուղացիները, մենք այնպես ենք ճնշված, որ հարկադրված ենք դիմել Ձեր օգնությանը, խնդրելով վերջ դնել չարիքին և աալ մեզ ազատություն ու հանգիստ (թ. 1—2)։

Ի. Ֆ. Պասկեիչի ստորադաս պաշտոնյաները, ստանալով գյուղացիների բողոքագիրը, հայտնեցին այն կարծիքը, որ Ղանլուչակի բնակիչները, որպես վերաբնակներ, պետք է ազատվեն հարկերից ու տուրքերից այնպես, ինչպես կառավարության որոշումով ազատված են դրանցից հայ բոլոր վերաբնակները, իսկ Մահմուդ Կուլի աղային որպես հատուցում նշանակել թոշակ՝ տարեկան 250 ռուբլի արծաթով։ Ապա նրանք նշեցին, որ եթե աղան չի ընդունում այդ պայմանը, կարող է օգտվել իր աղայական իրավունքից հարևան Գութնի-Կիշլակ մահմեդական գյուղում (թ. 14—15)։

Ի. Ֆ. Պասկևիչը, սակայն, մերժեց այդ կարծիքները և առաջարկեց, որ ղանլուչակցիները կատարեն նշված պարտականությունները։ Բայց գյուղացի-

---

1 Տե՛ս Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 2516, թ. 84 (այսուհետև վավերագրերի թերթերը կնշվեն տողամիջում)։

ները լսել անգամ չուզեցին այդ մասին։ 1831 թ. դեկտեմբերին Ի. Ֆ. Պասկեվիչին հղած նոր բողոքագրում, որը ստորագրել էին 24 մարդ. ընդգծվում էր, որ «Շորագյալի դիստանցիայի գյուղում աղա չի եղել։ Մենք գաղթել ենք թուրքական տիրապետությունից մենց հանուն կայսեր. հույս տածելով միապետի ողորմածության վրա, մենք կծառայենք միայն նրան, բայց ոչ թաթարին կամ որևէ այլ գյուղական աղային» (թ. 18)։

Իր հերթին Ի. Ֆ. Պասկևիչին դիմեց նաև Բայդար օղլի Մահմուդ Կուլի աղան, գանգատվելով գյուղացիների հանդգնությունից։ Ցարական բարձրաստիճան պաշտոնյան, ստանալով այդ բողոքագրերը, պաշտպանեց աղայի շահերը և Թիֆլիսի նահանգապետին հղած գրության մեջ նախ նշեց, որ ինքը դեռ 1829 թ. ապրիլի 12-ին առաջարկել էր հնարավորություն տալ Բայդար օղլուն Ղանլուչակում հավաքել բոլոր ցրված մահմեդական բնակիչներին և ծառայեցնել իրեն, այդ գյուղից դուրս քշելով արդեն հաստատված հայերին։ Ապա զարմանք հայտնելով, թե ինչպես է եղել, որ իր կարգադրությունը մինչև հիմա չի կատարվել, պահանջեց պարզել, թե ով է եղել դրա մեղավորը և անհապաղ զեկուցել իրեն, իսկ աղային խնդրեց նեթ թույլատրել, որ անցնի «իմ կողմից նշանակված (գյուղի) կառավարմանը» (թ. 40)։

Չնայած Ի. Ֆ. Պասկևիչի այդ կարգադրություններին. գյուղացիները մնացին անդրդվելի։ Մինչ աղայի նոր բողոքագիրը Թիֆլիս կհասներ, Ի. Ֆ. Պասկևիչը ցարի կարգադրությամբ մեկնում է Լեհաստան։

1832 թ. հունվարի 5-ին Թիֆլիսի նահանգապետը Բայդար օղլի Մահմուդ Կուլի աղային հայտնեց, որ կառավարությունը նրան նշանակում է թոշակ՝ տարեկան 250 ռուբլի արծաթով, իսկ գյուղացիները ազատվում են նրա օգտին կատարվող վճարումներից (թ. 42)։ Աղան հարկադրված ընդունեց այդ պայմանը և հիմնական բնակության համար տեղափոխվեց Քարվան-Սարայ (կամ Ալաքիլիսա) գյուղը (թ. 101—102)։

Հարցի այդպիսի լուծման գործում կարևոր դեր խաղաց ոչ միայն Արևելյան Հայաստանում վերաբնակվող հայ գյուղացիներին առժամանակ հարկերից ու տուրքերից ազատելու՝ ցարական կառավարության վարած քաղաքականությունը, այլև ղանլուչակցիների մղած համառ պայքարը։

1837—1838 թթ. Արևելյան Հայաստանում տեղի ունեցած գյուղացիական նշանավոր ելույթները լուսաբանված են հայ մասնագետների կողմից։ Բայց նրանցից մեկը, որ նույնպես արժանի է ուշադրության, տակավին մնում է ստվերում։ Դա 1837 թ. Շամշադինի դիստանցիայի Այրում գյուղի ընդվզումն է՝ ուղղված ցարական իշխանությունների հարստահարումների դեմ։

1837 թ. օգոստոսի 22-ին Շամշադինի գլխավոր պրիստավը հայտնում է Վրաստանի նահանգապետին, որ Այրումի բնակիչները հանդգնարար հոժարվում են պետական հարկերից ու պարհակներից և ցուցարերում են համառ դիմադրություն։ Նշելով, թե ոմանք նույնիսկ փախչում ու թաքնվում են հարևան գյուղացիների մոտ, նա պահանջում է, որ այդ գյուղացիները «ստանան արժանի պատիժ՝ փախստականներին թաքցնելու համար» (գ. 5463, թ. 2)։

Կամենալով ավելի հանգամանորեն ընութագրել այրումցիների վարքագիծը, պրիստավը ներկայացնում է կոնկրետ փաստեր։ Նա նշում է. ա) երբ իշխանությունները զորքի կերակրման համար նրանցից ուզեցին վերցնել անասուններ, բոլորը հրացանային կրակոցներով հարձակվեցին կազակների և եսավուլների վրա և վռնդեցին գյուղից, բ) երբ կազակներն ու եսավուլները, իշխանությունների կարգադրությամբ, փորձեցին այրումցիներից վերցնել 50 եզ՝ զորքը Աղստաֆա տեղափոխելու համար, նրանք նույն կերպ պատասխանեցին, գ) երբ իշխանությունները պահանջեցին այրումցիներից մարդիկ տրամադրել Ելիզավետպոլ—Թիֆլիս ճանապարհի բարեկարգման համար, բոլորը փախան և թաքնվեցին Ելիզավետպոլի օկրուգում, դ) երբ իշխանությունները 1837 թ. հուլիսին առաջարկեցին այրումցիներին 30 մարդ տրամադրել ճանապարհաշինարարության համար, նրանք վերստին հեռացան իրենց բնակավայրից, ցրվեցան զանազան վայրերում (թ. 3)։

Պրիստավը, այնուհետև, եզրափակում է, որ այրումսիների վարքագիծը իշխանությանը դնում է գժվարին կացության մեջ, այն կարող է ուժեղ ազդեցություն ունենալ Շամշադինի գիստանցիայի մյուս բնակիչների վրա, անտառներում լարված դրություն ստեղծել և նպաստել թալանչիների ու ավազակների հրոսակախմբերի առաջացմանը։ Այդ ամենը կանխելու համար նա անհրաժեշտ է գտնում այրումցիներին կամ վերաբնակեցնել Ելիզավետպոլի օկրուգի Այրում գյուղում, կամ ցրել նրանց Շամշադինի գիստանցիայում։ Վերջին դեպքում, ավելացնում է պրիստավը, պետք է խիստ հսկողություն ստեղծել նրանց վրա։ Իսկ դա հնարավոր է անել աղալարների միջոցով, պարտադրելով սրանց, որ եթե այրումցիները փախչեն, իրենք վճարեն նրանց հարկերն ու տուրքերը (թ. 4)։

1838 թ. սեպտեմբերի 3-ին գեներալ-լեյտենանտ Գոլովինը Վրաստանի նահանգապետի սեկրետարին առաջարկեց զեկուցել իրեն, թե որքանով են ուշադրության արժանի գլխավոր պրիստավի վերոհիշյալ եզրահանգումները։ Ապա ավելացրեց, թե արդյո՞ք չի կարելի գտնել այրումցիներին զբաղեցնող ուրիշ միջոցներ, չի՞ կարելի խնդիրն այնպես լուծել, որ նրանց չցրենք Շամշադինի դիստանցիայի գյուղերը կամ չտեղափոխենք Ելիզավետպոլի օկրուգը (թ. 5)։

Մենք չգիտենք, թե ինչ պատասխանեց Վրաստանի նահանգապետի պաշտոնակատարը։ Բայց հայտնի է, որ այրումցիները երկար ժամանակ շարունակեցին իրենց պայքարը։ Վերջապես, 1842 թ. սեպտեմբերի 3-ին վրացիմերեթական նահանգապետը զեկուցեց Կովկասյան երկրամասի գլխավոր կառավարչապետի զբաղեցրած գիրեկտորին, որ համաձայն Շամշադինի գավառապետի հաղորդման, Այրումի բնակիչները, որոնք բաղկացած են 196 տնտեսություններից, առանց երկրագործության արդեն վճարում են այն բոլոր հարկերն ու պարտականները, ինչ գավառի մյուս բնակիչները։ «Ուստի,— եզրափակում է նահանգապետը,— անիմաստ է վերաբնակեցնել նրանց Ելիզավետպոլի Այրումում կամ տարաբնակեցնել տեղամասի գյուղերում» (թ. 13)։

Այսպիսով հնգամյա համառ պայքարից հետո այրումցիները թեև չազատվեցան աղատվել ցարական իշխանությունների բռնություններից ու հարկահարումներից, այնուամենայնիվ հասան այն բանին, որ մեղմեցին գրանք, մնալով իրենց հարազատ գյուղում։

ИЗ ИСТОРИИ КРЕСТЬЯНСКИХ ВОЛНЕНИЙ В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ

Доктор ист. наук А. С. АМБАРЯН

Резюме

В настоящем сообщении говорится о крестьянских волнениях в селениях Ганлучак Лорийского участка (1829 г.) и Айрум Шамшадинской дистанции (1837—1842 гг.). Первое было направлено против помещичьего ига, второе—против произвольных поборов царских властей. Благодаря упорной борьбе ганлучакцы избавились от владельческой зависимости, а айрумцы добились облегчения своего положения.